ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

«Խորեն Վեհափառի սուրբ օրինակով մեր կյանքը դարձնենք աղոթք ու նվիրում, ի շինություն Հայրենիքի, ի պայծառություն մեր Մայր Եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի»

Գարեգին Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ապրիլի 6-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Նահատակ Հայրապետը» խորագրով հուշ-երեկո՝ նվիրված երանաշնորհ Տ.Տ. Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի նահատակության 70-րդ տարելիցին: Երեկոն կազմակերպվել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի ազգային արխիվի կողմից:

Հուշ-երեկոն բացեց Մայր Աթոռի արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: Իր խոսքում Տեր Հայրը տեղեկացրեց, որ Խորեն Ա Կաթողիկոսի նահատակության 70-րդ տարելիցի առիթով առաջիկային լույս է ընծայվելու Խորեն Ա-ի անտիպ վավերագրերի և լուսանկարների մի հատոր:

Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի կենսագրությանը, ազգային-եկեղեցական կյանքում ունեցած մեծ ավանդին ու եղերական մահվան հանգամանքներին անդրադարձան Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը և Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը:

Այնուհետև շարականների և ազգային-ժողովրդական երգերի կատարումներով հանդես եկավ հայկական հնագույն երաժշտության «Շարական» համույթը՝ գեղարվեստական ղեկավարությամբ Դանիել Երաժիշտի: Ապա ներկաները դիտեցին «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած ֆիլմը՝ նվիրված Տ.Տ. Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Երեկոյի ավարտին ամենքին իր Հայրապետական պատգամն ու օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: «*Ազգընտիր Խորեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմեց Լուսավորչի գահին՝ զորացնելու առաքելահիմն Հայոց Եկեղեցին, մեր բարեպաշտ նախնյաց օրինակով անմար պահելու լույսը քրիստոնեական հավատքի, իրագործելու համայն հայության նվիրական իղձերն ու երազանքները:*

...Աստվածամարտ և եկեղեցամարտ բռնապետությունը, չկարողանալով ընկճել հավատքն ու ոգին արիասիրտ Հայրապետի, մահվան մատնեց Քրիստոսի հավատարիմ ծառային, բայց ի զորու չեղավ հայ ժողովրդի հոգում մոռացության մատնելու բարի հիշատակը նահատակյալ Կաթողիկոսի և ժողովրդի սերը հանդեպ իր Հայրապետը:

Կան հիշատակներ, որոնք վեր են ժամանակի իշխանությունից՝ արձանագրվելով ոչ միայն ազգի պատմության ոսկե էջերում, այլ նաև յուրաքանչյուրի հավատավոր սրտում ու հոգում: Այդպիսին է և այդպիսին պիտի լինի նահատակյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Խորեն Մուրադբեկյանի հիշատակը, քանզի բազմավաստակ Հայրապետը, որպես Գրիգոր Լուսավորչի գահի արժանավոր ժառանգորդ, հերոսացավ ու հավերժացավ իր բոլորանվեր կյանքի ճանապարհին՝ պաշտպանելով Եկեղեցին Հայաստանյայց՝ իր օրինակով ամուր պահելով լույս հավատքն ու եկեղեցասիրությունը հայորդյաց:

Ամենուր՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի, համայն ժողովուրդը հայոց որդիական սիրով է հիշում սիրելի Վեհափառին, ում հոգու մեջ մշտավառ էր մեր վսեմագործ Հայրապետների շունչն ու ոգին», - նշեց Նորին Սրբությունը:

Հուշ-երեկոյին կազմակերպվել էր նաև Խորեն Կաթողիկոսին առնչվող արխիվային փաստաթղթերի և նյութերի ցուցադրություն:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարտ Ս. Պատարագի, նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվել էր հոգեհանգիստ՝ ի հիշատակ Խորեն Ա նահատակ Կաթողիկոսի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ